

**ՀԱՅԵՐԵՆԻ ԳՈՒՇԻԿ ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԱՆԳԼԵՐԵՆ
ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
Գարգալոյան Ռ. Թ., Բերբերյան Վ. Տ.**

Սույն հոդվածում ներկայացվում են հայերենում և անգլերենում առկա գոեհիկ դարձվածքները, գոեհկաբանությունները: Հոդվածի խնդրո առարկան գոեհիկ դարձվածքների թարգմանությունն է, քանզի նման դարձվածքային միավորները թարգմանվում են մի քանի սկզբունքներով: Այս դարձվածքների համակարգված ուսումնասիրությունը ցայսօր արդիական է և երկուստեք կարևոր նշանակություն ունի: Հոդվածում տեղ են գտել ոչ միայն բառարաններում վկայված համապատասխան գոեհիկ դարձվածքների անգլերեն համարժեքները, այլ նաև մեր կողմից կատարված թարգմանությունները:

Բանալի բառեր. գոեհիկ դարձվածքներ, գոեհկաբանություններ, համարժեք (ադեկվատ) թարգմանություն, դարձվածքային համապատասխանություն, համատեքստ, գործածություն, ոճ:

Բանասիրական մերօրյա ուսումնասիրություններում կարևոր տեղ ունի դարձվածքների քննությունը: «Դարձվածք» եզրույթը ընկալվում է *լայն* և *նեղ* առումներով: «Բառերի այն կապակցությունը, որը հանդես է գալիս իբրև իմաստային-արտահայտչական տարբերակ. ընդ որում, երբ բառակապակցության բաղադրիչների իմաստը կորչում է ընդհանուր (դարձվածքային) իմաստի մեջ, գործ ունենք **իդիոմի** (առանձնահատուկ արտահայտության) հետ, իսկ եթե բաղադրիչները դեռևս պահպանում են անկախ նշանակություն, ապա դրանց ամբողջությունը սովորական **դարձվածային կապակցություն** է» [6, 81]: Այն խիստ առնչությունները, որոնք առկա են դարձվածքների, ասացվածքների, առածների, շրջասույթների, թևավոր խոսքերի, կայուն բառակապակցությունների միջև, շատ լեզվաբանների համար խթան են այս լեզվական իրողությունները հավաքապես դարձվածք կոչելուն: Պետք է փաստել, որ

ցայսօր դարձվածաբանության սահմանների, դարձվածաբանական միավորների տարբերակման, դարձվածքների իմաստաբանական, ձևաբանական դասակարգման և այլ հարցերի վերաբերյալ բանասերները համակարծիք չեն և դրսևորում են տարակարծություն հատկապես բնորոշման, ճանաչման խնդրում: Մենք կհսում ենք այն լեզվաբանների միասնական տեսակետը, որոնք, բերելով համոզիչ փաստարկումներ, առաջարկում են համակցել մի շարք լեզվական իրողություններ: Մեզ համար առավել կարևոր է առկա անջրպետի հաղթահարումը, նորովի մոտեցումը, ինչպես նաև դարձվածքների, դրանց թարգմանության խորքային, արդիական նոր ուսումնասիրությունների մեկնարկումը, բառարանների կազմումը:

Գոեհիկ դարձվածքները, գոեհկաբանությունները մեր կարծիքով այսօր հավասարապես են կիրառվում առօրյա-խոսակցական ոճում, ընտանեկան-կենցաղային բառաշերտում և գեղարվեստական խոսքում: Կա տեսակետ, որ գրական լեզվի համար անթույլատրելի է գոեհկաբանությունների, գոեհիկ դարձվածքների գործածությունը: Դա բացասաբար է անդրադառնում լեզվական մշակույթի վրա, ուստի անհրաժեշտ է սահմանափակել դրանց կիրառումը գործառական բոլոր ոճերում: Հավելենք, որ մերօրյա շատ ու շատ գրողների գործերում կարելի է տեսնել բազմաթիվ ժարգոնային բառեր ու արտահայտություններ, հասարակաբանություններ: Մենք կարծում ենք, որ հակամանկավարժական և հակադաստիարակաչական ազդեցություն կարող է ունենալ գոեհիկ դարձվածքների, գոեհկաբանությունների հաճախակի, անհարիր կիրառությունը: Լ. Եզեկյանը գրում է. «Որքան էլ գոեհկաբանությունները ոճական որաշակի նպատակադրում ունենան, այնուամենայնիվ նրանց գործածությունը շատ քիչ դեպքերում կարող է գեղագիտական առումով արդարացում ունենալ, խոսքը վերաբերում է այն դեպքերին, երբ դրանք ունեն գուտ անվանողական գործառույթ, այն խիստ բացառիկ դեպքերին, երբ նկարագրվում են բանտը, գաղութը, կալանավայրը և նման միջավայրերն ու այնտեղ գործող մարդիկ, նրանց մտածողությունն ու հաղորդակցության գործընթացը, իսկ մնացած դեպքերում դրանք բացասաբար են անդրադառնում ոչ միայն գեղարվեստական երկի խոսքարվեստի, նրա լեզվական մշակույթի վրա, այլև նրանց երբեմնի գործածությունը խրախուսելի չէ և՛ դաստիարակաչական, և՛ ուսուցողական, և՛ առավել ևս՝ գեղարվեստական նկատառումներով» [3, 156]: Եթե նախկինում գոեհիկ դարձվածքները, գոեհկաբանությունները անըմբռնելի էին կամ քիչ

հասկանալի հասարակությանը, ապա այսօր ընկալելի են հանրության կողմից:

Ստորև ներկայացնենք «Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան»-ում առկա մի քանի գոեհիկ դարձվածքներ և բերենք գործածության հետաքրքիր օրինակներ գեղարվեստական գրականությունից՝ օգտվելով «Արևակ» (Արևելահայերենի ազգային կորպուս) շտեմարանից: Այսպես՝

բերանը հոտեցնել [8, 119]–հայհոյել, հայհոյանք տալ, զագրախոսել,

էջ ուտել, էջ մեծանալ [8, 226]–կոպիտ, անտաշ դաստիարակություն ստանալ, ի ծնե կոպիտ, անտաշ լինել (միայն ուտելու մասին մտածել),

խմած աղբյուրի ջրի մեջ թքել [8, 288]–երախտավորի հանդեպ ապերախտ գտնվել,

որձատու գազար [8, 486]–տղամարդու նման կոշտ աղջիկ, կին

շան վաստակ [8, 459]–ապօրինածին, լպիրշ, անամոթ:

— Իսկ չէ՞ որ Անգլիան ու Ֆրանսիան իրար թշնամի են, — հարցրեց լսածներից ցնցված Դոլգորուկովը:

— Այո, նրանք ուրիշ դեպքերում **իրար կոկորդ են կրծում**, բայց մեզ ռուսներից մեկուսացնելու և թուրքերին մեր դեմ հանելու համար միմյանց **թքածը լիզում են**:

(Մերո Խանզադյան «Միսիթար Սպարապետ») [11]

— Ի՞նչ, ի՞նչ ասաց, Բարխուդարը յուր ասածի մարդ է, **թքածը լիզողը չի՞**, հաստատ կամք ունի՞:

(Շիրվանզադե «Նամուս») [11]

— Այ տխմար, ու՞մ ես **էջի տեղ դնում** ու **էջ-էջ դուրս տալիս**, ու **էջ խելքովդ** հայերին **էջի տեղ դնում**:

(Վահե Ավետյան «Դեսից-դենից») [11]

Աներկբա է, որ մեծ է դարձվածքների ոճական արժեքը գեղարվեստական խոսքում: Գոեհիկ դարձվածքները, գոեհկաբանություններն ունեն ոճական որոշակի նպատակադրում, և նրանց գործածությունը նպատակային լինելուց բացի հատուկ ուշադրություն է պահանջում: Ե. Գևորգյանը գրում է. «Տարբեր վիճակների նկարագրությունը պահանջում է դարձվածքների տարբեր ընտրություն ու գործածություն» [2, 31]:

Գոեհիկ դարձվածքների թարգմանության ժամանակ տարբերակում են մի քանի եղանակ, այն է՝ համարժեք (աղեկվատ) թարգմանություն, դարձվածքային համապատասխանություն, նկարագրական թարգմանություն [3, 209]: Թարգմանչական սխալներից խուսափելու համար

անհրաժեշտ է տիրապետել այս եղանակներին, սկզբունքներին, պարզել, թե գոեհիկ դարձվածքները արդյոք նույնությամբ են արտահայտվում, ունեն իրենց համարժեքները (բացարձակ կամ մոտավոր) մեկ այլ լեզվում: Այդ ամենն էլ ինքնին պահանջում է կատարել համարժեք դարձվածքների ճաշակով ընտրություն, որը և պահանջում է քաջածանոթ լինել թարգմանելի լեզվի դարձվածքների նրբիմաստներին, ոճական մյուս կողմերին [2, 40]: Ավելացնենք, որ յուրաքանչյուր դարձվածք ունի իր թարգմանելիության առանձնահատկությունը:

Բերենք Ա. Սուրբիայանի, Ս. Գալստյանի «Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան»-ում վկայված գոեհիկ դարձվածքների մի քանի օրինակներ և ներկայացնենք դրանց անգլերեն համապատասխան թարգմանությունները: Այսպես՝

սկանջի միսն ուտել – grate/jar upon sb’s ear; din in (into) sb’s ears; offend sb’s ear ... bash sb’s ear (*շատ խնդրելով կամ կրկնելով մեկին ձանձրացնել*),

սնրան անասուն – a headless nail; a useless person; all thumbs; a couch potato (*ծույլ, ապիկար մարդ*),

անոթի փորով զկոտալ – starve to death (*խիստ քաղցած լինել*),
ինչպես նաև սոված զկոտալ – starve to death; die of hunger (starvation) (*սաստիկ քաղցած, անոթի լինել*),

Աստծու եզ – lame duck (*խեղճ, թշվառ*),

զերեզմանից (դուրս) քաշած – bury; commit to the earth ... dead colour; become cadaverous; deadly pale (*սաստիկ հյուծված, վտիտ, դժգույն*),

զուխը դարմանով լի – he is a giddy-pate; feather-brain; scatter-brain; giddy goat (*հիմար, ապուշ, անխելք*),

երեսը գոմշի կաշի անել (դարձնել), երեսը շան կաշի շինել – to set one’s face like a flint (*երեսը պնդացնել, չամաչել, ամոթի զգացում չունենալ*),

երկու դռան հաչող – two master’s servant (*միաժամանակ երկուսի համար ծառայող, երկուսի շահերը պաշտպանող, երկու տիրոջ ծառա*),

թների միսը կրծել – go bananas, hump one’s back, hump up the back (*խիստ զայրանալ, կատաղել, մոլեզունել*),

ռեխը ցրիվ տալ – use bad language (*անկարգ, անվայել խոսել, հայհոյանքներ թափել*)

քոռի աչքերով տեսնել – a nod is as good as a wink to a blind horse (*հավաստի, հաստատ է*),

շան պես փսխածը ուտել – the dog returns to his vomit
(խոստումնազանց լինել),

շալվարը լցնել կամ կեղտոտել – scare the pants off sb. (աստիկ
վախենալ),

Վերոնշյալ դարձվածքները, ըստ էության, ունեն նույն կամ մոտ
իմաստը, ոճական համապատասխանությունը: Նկատելի է, որ մի շարք
գոեհիկ դարձվածքներ անգլերեն թարգմանելիս կամ համարժեքը
գտնելիս մերթ կորցնում են իրենց խիստ վիրավորական բնույթը՝
ստանալով մեղմ գունավորում (մի դռան շան նման – peace and quiet),
մերթ էլ աստկանում են (շան վաստակ–son of a bitch): Կան
դարձվածքներ, որոնց դեպքում փոխվել է մեկ բաղադրիչ, սակայն
իմաստը պահպանվել է, ինչպես՝ իշու խելք – as silly/stupid as a goose, շան
բախտ ունենալ – lucky dog/devil, եզի/եշի պես համառ – as stubborn as a
mule և այլն:

Հաճախ դարձվածքի համարժեքը տարբեր լեզուներում, կապված
տարբեր պատկերացումների ու այլաբանությունների հետ,
արտահայտվում է միանգամայն այլ բաղադրիչներով [2, 42]: Այս
խնդրում լիարժեք թարգմանության հասնելու համար հարկավոր է
դիտարկել նաև համատեքստը: Համատեքստն է որոշում՝ որքանով «նեղ»
կամ «լայն» նշանակություն պետք է ունենան թարգմանական տեքստում
բառերը, որոնք և կկազմեն անհրաժեշտ իմաստն արտահայտող
նախադասությունը [4, 117]: Այն ընդգծում է բառի, բառակապակցության,
արտահայտության, դարձվածքի, ասույթի կոնկրետ բովանդակությունը,
ինչպես նաև արտահայտչականությունը: Բերենք անգլիական
գրականությունից օրինակներ և թարգմանենք, առանձնացնենք
դրանցում առկա գոեհիկ դարձվածքները: Այսպես՝

1. “Oh, he has come into his property” answered Tom nodding his head
and smiling. “He is a **lucky dog**”, said Martin. “I wish it were mine instead”.

(Ch. Dickens “Martin Chuzzlewit”) [10, 675]

–Վերջապես նա իրավունք ստացավ տնօրինելու իր
ժառանգությունը,–պատասխանեց Թոմը ժպտալով և գլուխը
տմբոմբացնելով:

–Շան բախտ ունի,– ասաց Մարտինը: Երանի ես լինեի նրա տեղը:

(Չ. Դիքենս «Մարտին Չեզլվիթ»)

Շան բախտ ունենալ – lucky dog/devil (հաջողակ, շատ բախտավոր
լինել):

2. O, he is a **son of a gun** of a fine captain, there is no doubt of that.

(R. Stevenson "The Wrecker") [10, 989]

Այդ **անառակի որդին** իսկական կապիտան է, ոչ մի կասկած չկա:

(Ռ. Մթիվենսոն «Խորտակողը»)

Շնից ծնված – son of a bitch, son of a gun (անառակ շնաբար մարդ կամ անառակ կնոջ որդի):

3. "Nephew." retorted Denis, "You **lie in your throat**"; and he snapped.

(R. Stevenson "New Arabian Nights") [10, 641]

–Ջարմի՛կ, դու **նենգաբար ստում** ես,– արհամարհանքով և զզվանքով պատասխանեց Դենիսը:

(Ռ. Մթիվենսոն «Նոր արաբական գիշերներ»)

Սուտը բերնի մեջ լողալ – lie in one's teeth/throat (ստի տոպրակ, սուտասան, սուտ խոսող):

4. "What did you go hitting him on the nose for?". "He gave me a thick eat first...". "You must have called him something". "Only **a dirty dog**".

(J. Galsworthy "The Silver Spoon") [10, 301]

–Ինչու՞ հասցրեցիր քթին:

–Առաջինն ինքը տվեց քիթ-մոթիս:

–Երևի հայիոյել ես նրան:

–Ընդամենը **քոսոտ շուն**, ուրիշ ոչինչ:

(Ջ. Գալսվորու «Արծաթե գդալը»)

Քոսոտ շուն – dirty dog (հայիոյական, արհամարհական արտահայտություն՝ ուղղված մարդուն):

Լեզվական զանազան իրողությունների վիճակագրական նկարագրությունը տալը ևս կարևոր և արդիական է: 2008 թ. լույս տեսավ Տ. Պ. Սահակյանի «Հաճախ օգտագործվող դարձվածքների բառարանը» ("Dictionary of frequently used idioms"), որտեղ հեղինակը ներկայացնում է անգլերենում, հայերենում, ռուսերենում գործածական բարձր հաճախականություն ունեցող դարձվածքները: Դարձվածքների այս խումբը մեծամասամբ դիմակայել է ժամանակի փորձությանը: Այս ընթացքում որոշ դարձվածքներ կորցրել են իրենց երբեմնի գործածությունը, գործածության ոլորտը՝ ճանապարհի հարթելով այլ լեզվական իրողությունների: Գոեհիկ դարձվածքներից այսօր շատ ավելի գործածական են հետևյալները.

Ամեն ինչի վրա թքել – spit on everything (ամեն ինչից հրաժարվել, ամեն բան թողնել, հրաժարվել որևէ գործով զբաղվելուց կամ որևէ բան անելուց),

դազաղ մտնել – bury; commit to the earth, dig a grave for sb (*մեռնել, կնքել մահկանացուն*),

թքած ունենալ – I don't care a red cent for; not to care a brass button (fig, rap) (*բանի տեղ չդնել, հաշվի չառնել*),

իշու խելք – as silly/stupid as a goose (*հիմարություն, անխելքություն*),

շան բերան – use bad language (*լկտիաբար հայհոյել*),

շան վաստակ – son of shame (*ապօրինածին, լպիրշ, անամոթ*):

Կատարված ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հայերենում և անգլերենում կան բազմաթիվ գոեհիկ դարձվածքներ, գոեհկաբանություններ, որոնց թարգմանությունը կատարվում է հստակ սկզբունքներով, եղանակներով: Թարգմանելիս անհրաժեշտ է հաշվի առնել լեզվական և արտալեզվական գործոնները, ունենալ հզոր գործիքակազմ. փայլուն տիրապետել երկու լեզուներին, մշակութային արժեքներին, գրականությանը: Գոեհիկ դարձվածքները, գոեհկաբանություններն ունեն գործածության հատուկ շրջանակ: Դարձվածքների այս խումբը քիչ է ուսումնասիրված, ինչպես նաև թարգմանված: Նման ուսումնասիրությունները հնարավորություն են ընձեռում դարձվածքների թարգմանության, տարածման վերաբերյալ գործնականում նոր լուծումներ առաջադրել և երևան են հանում շատ հետաքրքիր լեզվական և մշակութային իրողություններ:

АРМЯНСКИЕ ВУЛЬГАРНЫЕ ФРАЗЕОЛОГИЗМЫ, ИХ АНГЛИЙСКИЕ ПЕРЕВОДЫ

Гаргалоян Р. Т., Берберян В. Т.

В данной статье представлены вульгарные фразеологизмы и вульгаризмы, существующие в армянском и английском языках. Целью данной статьи является освещение проблемы перевода вульгарных фразеологизмов, основанных на определенных принципах. Комплексное изучение таких фразеологизмов актуально и имеет важное значение. В данной статье приводятся не только представленные в словарях эквиваленты, но и представлены сделанные нами переводы вышеуказанных фразеологизмов.

Ключевые слова: вульгарные фразеологизмы, вульгаризмы, адекватный перевод, фразеологическое соответствие, контекст, применение, стиль.

ARMENIAN VULGAR PHRASES, THEIR ENGLISH TRANSLATIONS

Gargaloyan R. T., Berberyan V. T.

This article introduces vulgar phrases and vulgarisms in Armenian and English. The subject matter of the article is the translation of vulgar phrases, since such phrases are translated according to several principles. A systematic study of these phrases is still relevant today and is of mutual importance. The article contains not only the English equivalents of the corresponding vulgar phrases taken from dictionaries, but also our translations.

Keywords: vulgar phrases, vulgarism, equivalent translation, phraseological correspondence, context, usage, style.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բեդիրյան Պ. Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն: Երևան: Երևանի պետհամալսարանի հրատ.: 1973: 230 էջ:
2. Գևորգյան Ե. Հայերենի դարձվածքները: Երևան: «Լույս»: 1969: 137 էջ:
3. Եզեկյան Լ. Հայոց լեզու: Երևան: Հեղինակային հրատ.: 2017: 397 էջ:
4. Թարգմանության տեսություն: Լեզվաբանական հայեցակետ: Երևան: ՌՀՀ հրատ.: 2018: 317 էջ:
5. Նազարյան Ա. Անգլերեն դարձվածքների ուսումնական համառոտ բառարան: Երևան: «Ամարաս»: 2000: 219 էջ:
6. Պետրոսյան Հ. Ջ., Գալստյան Ս. Ա., Ղարազյուլյան Թ. Ա. Լեզվաբանական բառարան: Եր.: 1975: 320 էջ:
7. Սահակյան Տ. Պ. Հաճախ օգտագործվող դարձվածքների բառարան: Եր.: «Սահակ Պարթև»: 2008: 183 էջ:
8. Սուրբիսյան Ա., Գալստյան Ս. Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան: Երևան: Երևանի Համալսարանի հրատ.: 1975: 614 էջ:
9. Սեֆերյան Ս., Լազարյան Ա. և ուրիշներ Իմաստախոս ժողովուրդը: Երևան: «Արեգ»: 2005: 311 էջ:
10. Кунин А. В. Англо-русский фразеологический словарь. Москва. Государственное издательство иностранных и национальных словарей. 1956. 1455 с.
11. <http://www.eanc.net/>
12. <https://www.theidioms.com/>

Տեղեկություններ հեղինակների մասին

Գարգարյան Ռ. Թ. - բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
Երևանի պետական համալսարան
Էլ. փոստ՝ Gargaloyan@yahoo.com

Բերբերյան Վ. Տ. - մագիստրոս
Երևանի պետական համալսարան
Էլ. փոստ՝ Walter.berberyan@mail.ru

Տրվել է խմբագրություն՝ 14.08.2020
Գրախոսվել է՝ 17.11.2020